

# ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿՑ ԱՐԻՎԵԼԱՀԱՅՆՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԻՎՄՏԱՀԱՅՆՐԵՆՈՒՄ

## Ա. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ծարադասությունը, որպես քերականական կապակցման միջոց, լեզվի բարդ ու տա-  
ռողունակ հարցերից է: Ծանկացած խոսք, նույնիսկ երկու բառից կազմված, արդեն կապ-  
վում է շարադասության հետ: Իսկ երբ հարցը ծավալում՝ երկուսից ավելի միավորներից  
կազմված նախադասությունների մասին է, ապա այդ դեպքում շարադասության հետ կապ-  
ված շատ ու շատ խնդիրներ են ծագում: Ժամանակակից հայերենը հիմնականում կցական  
լեզու է: Այդ պատճառով էլ, ի տարբերություն անջատական լեզուների, հայերենում բա-  
ռերը շարահյուսական կառույցներում կարող են բավականին շատ տեղաշարժեր կատա-  
րել: Սակայն, սա չի նշանակում, թե շարադասության դերը հայերենում փոքր է, և այն  
լրիվ ազատ է: Միևնույն բառերի իմաստային և քերականական ճիշտ քասավորության  
տարբերակները դեռևս միևնույն նախադասության տարբերակները չեն: Օրինակ՝ «Նա գա-  
լու է» և «Նա է գալու» նախադասությունները, որոնք միևնույն բառային միավորների  
քերականորեն և իմաստային տեսակետից ճիշտ տարբեր դասավորություններն են, միև-  
նույն նախադասության տարբերակները չեն, քանի որ առաջինը կապի «Նա ի՞նչ է անե-  
լու», իսկ երկրորդը՝ «Ո՞վ է գալու» հարցերի դեպքում:

Ծարադասությունը լեզուներում տարբեր գործառնություններ ունի: Ահա դրանք հստակորեն  
առանձնացնելով ու հանգամանորեն ուսումնասիրելով միայն կարելի է ճիշտ և համակող-  
մանի գնահատել շարադասության դերը լեզվում՝ տվյալ դեպքում հայերենում: Ծարադա-  
սությունը քննելու համար պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները:

1. Ծարադասությունը, որպես շարահյուսական կապակցության միջոց, հանդես է գա-  
լիս ոչ միայն նախադասությունների, այլև բառակապակցությունների (նաև դարձվածային  
միավորների) ձևավորման ժամանակ:

2. Ծարադասության ուսումնասիրման ժամանակ պետք է հաշվի առնել ոչ միայն նա-  
խադասության անդամները, այլև անդամ չհանդիսացող միավորները:

3. Ծարադասությունը տվյալ նախադասության (բառակապակցության) մեջ կարող է  
քերականական գործառնույթ ունենալ. այսինքն՝ միավորների տեղափոխությունը կարող է  
հանգեցնել շարահյուսական պաշտոնի, լրացում-դրացյալ կապակցության կամ խոսքիմա-  
սային պատկանելիության փոփոխության:

4. Ծարադասությունը տվյալ նախադասության մեջ կարող է իմաստային գործառնույթ  
ունենալ, այսինքն՝ միավորների տեղափոխությունը կարող է հանգեցնել իմաստի փոփո-  
խությանը:

5. Ծարադասությունը տվյալ նախադասության մեջ կարող է ոճական գործառնույթ ու-  
նենալ, այսինքն՝ միավորների տեղափոխությունը միայն ոճային-ձևային փոփոխություն կա-  
ռաչացնի:

6. Նախադասության (բառակապակցության) միավորների ճիշտ շարադասությունը հա-  
խապատասխանում է լեզվի օրինաչափություններին և ընդհանրապես լեզվամոտածողությա-  
նը: Այսինքն՝ բառերի դասավորությունը քերականական և իմաստային տեսանկյուններից  
պետք է ճիշտ լինի, և բացի այդ, նախադասությունը տվյալ շարադասությամբ պետք է  
արտահայտի հենց այն իմաստը, որը հաղորդվում է խոսողի կողմից, քանի որ շարադա-  
սության փոփոխությունը կարող է առաջ բերել տրամաբանական շեշտի, թետևաբար և  
իմաստի փոփոխություն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արդի հայոց լեզվում շարադասությունը երեք  
գործառնույթ ունի՝ քերականական, իմաստային և ոճական: Բնենք այս երեք գործառնույթ-  
ները և նրանց դրսևորումներն արևելահայերենում և արևմտահայերենում:

Ծարադասության քերականական գործառնույթը: Նախադասության կազմի մեջ մտնող

միավորների շարահասության փոփոխությունը կարող է առաջացնել հետևյալ քերականական փոփոխությունները՝ շարահյուսական պաշտոնի փոփոխություն, խոսքիմասային պատկանելիության փոփոխություն և լրացում-րացաց կապակցության փոփոխություն: Արբանք սակայն առաջ են գալիս ոչ միշտ, այլ միայն որոշակի դեպքերում, որոշակի միավորների տեղափոխման ժամանակ, ընդ որում, երբեմն առաջին երկուսը կարող են հանդես գալ միաժամանակ: Ծարադասության քերականական գործառույթի դրսևորումն արելիս հայերենում և արևմտահայերենում սկզբունքորեն նույնն է, սակայն ծավալային ընդգրկումով մի շարք դեպքերում տարբեր է նրանցից յուրաքանչյուրում:

**Ենթակա-ուղիղ խնդիր:** Ուղիղ խնդրի ձևավորումը հայոց լեզվի երկու գրական ճյուղերում տարբեր է: Արևելահայերենում անձի անունները որոշելի ամսան դեպքում գրեթե միշտ դրվում են տրական (տրականաձև հայցական) հոլովով, իսկ անորոշ ամսան դեպքում՝ ուղղականով (հայցականով) կամ տրականով: Իրի անունները (չհաշված շնչավորման դեպքերը) միշտ գործածվում են ուղղականով: Կենդանիների անունները որոշյալ ամսան դեպքում կարող են դրվել թե՛ ուղղականով, թե՛ տրականով, իսկ անորոշ ամսան դեպքում՝ հիմնականում ուղղականով: Այսպիսով, քանի որ ենթական միշտ դրվում է ուղղական հոլովով, ուղիղ խնդիրը մեծամասամբ ձևաբանորեն տարբերակված է նրանցից: Իսկ այն դեպքերում, երբ ենթական և ուղիղ խնդիրը ձևաբանական տարբերակում չունեն, դրանք պարզ են տրամաբանորեն: Այսպես «Ուսուցիչը գնահատեց աշակերտին»։ «Երեխան սիրում է մորը»։ Անխադասություններում ուսուցիչը և երեխան ենթակաները ուղղական հոլովով են դրված և տարբերվում են աշակերտին և մորը ուղիղ խնդիրներից, որոնք արտահայտված են տրական հոլովով դրված գոյականներով, իսկ «Աճճընը թրջեց հողը»։ «Աշակերտը սովորեց դասերը»։ Անխադասություններում տրամաբանորեն պարզ է, որ անձրևը և աշակերտը ենթականեր են, իսկ հողը և դասերը՝ ուղիղ խնդիրներ:

Ժամանակակից արևելահայերենում ենթական և ուղիղ խնդիրը ոչ մի ձևով իրարից տարբերակված չեն միայն այն դեպքում, երբ երկուսն էլ թվի, հոլովի, առկայացման նույն կարգերն ունեն, և տրամաբանորեն էլ պարզ չէ, թե որն է ենթական և որը ուղիղ խնդիրը: օրինակ՝ «Մի մարդ մի ճամփորդ տեսավ»։ «Ծառը փակում է տունը»։ «Անապատում կանգնեցանակում է ջուր»։ Այս դեպքերում ընդունված է առաջինը համարել ենթակա, երկրորդը ուղիղ խնդիր: Այսինքն, եթե փոխենք ենթականի և ուղիղ խնդրի տեղերը, կփոխվեն նրանց շարահյուսական պաշտոնները: Ահա այս տիպի անխադասություններում է, որ ժամանակակից արևելահայերենում ենթակա-ուղիղ խնդիր տեղափոխության ժամանակ շարահասությունը քերականական գործառույթ ունի:

**Արևմտահայերենում** ենթականի և ուղիղ խնդրի որոշման հարցում շարահասության դերը կտրուկ մեծանում է: Այստեղ ենթական և ուղիղ խնդիրը ձևաբանորեն տարբերակվում են միայն երկու դեպքում.

1. Երբ ենթական անձնանուն է, և անխադասության կազմում կա խնդրի պաշտոնով մեկ այլ անձնանուն, ապա ենթական դրվում է առանց հոդի, իսկ խնդիրը՝ հոդով, այսինքն՝ ենթական և ուղիղ խնդիրը տարբերակված են լինում առկայացման քերականական կարգով. «Նույն երեկոյին Սմեց Վարդան փառավոր կերպով կը ծեծե Սոճ Զանը» (ԵՕ). «Աղավթի իզուր փնտրեց Խաչիկը» (ԵԶ). «Հետևյալ առտու Նշառ Սյուն Սկյուտար տարավ» (ՀՄ). «Քես Սերգո կը հավնի իր քովը առնելու Վարդանը» (ԵԶ):

2. Երբ ուղիղ խնդիրը կամ ենթական արտահայտված են դերանունով, քանի որ այդ դեպքում ուղղական, տրական և հայցական հոլովները ձևով տարբերվում են իրարից. «Տեր Սահակ եկավ ինձ մոտ և Ռես Սերոյի կողմն գիս հրավիրեց անոր տունը» (ԵԶ). «Պյուղացիները սաստեցին զԱնոնք» (ՀՄ). «Թավահոն Նուն Պեկը գիս ներկայացուց իր հյուրերուն» (ՀՄ):

Մյուս դեպքերում, երբ ենթական և ուղիղ խնդիրը տրամաբանորեն պարզ են, շփոթության վտանգ չկա. օրինակ՝ «Կիներու մոլեռանը ամբոխը նորա ձայնը խեղդեց» (ԵԶ). «Ծառաները տաք միսի խորովածներ բերին» (ՀՄ): Սակայն, երբ տրամաբանորեն պարզ չեն ենթական և ուղիղ խնդիրը, դրանք որոշվում են շարահասությամբ. «Հատուկ է, թե Ավետիսը կշուր աղչիկը» (ԵԶ). «Իզուր սպան ջանաց ցնցել ու արթնացնել գետինը փոխած աղչիկը» (ԵԶ). «Պետք է որ հայրս ալ սիրե իմ կինս» (ՀՊ) անխադասություններում ընդգծված բառերից առաջինները համարվում են ենթականեր, երկրորդները՝ ուղիղ խնդիրներ: Այս անխադասություններից յուրաքանչյուրում ենթականի և ուղիղ խնդրի փոխադարձ տեղափոխությունը կհանգեցնի նրանց շարահյուսական պաշտոնների հակադարձ

<sup>1</sup> Այս մասին տե՛ս Խ. Բաղդևան, ժամանակակից հայոց լեզվի շարահասությունը և նրա ուսուցումը, Երևան, 1984, էջ 95:

փոփոխությանը. ենթակամ կդառնա ուղիղ խնդիր և հակառակը: Այս դեպքում շարադասությունը քերականական գործառույթ ունի:

**Որոշիչ-պարագա (ածական-մակբայ):** Արդի հայերենում մի շարք բառեր երկփեղկված իմաստ ունեն: Դրանք կարող են գործածվել և՛ մակբայական կիրառությամբ, և՛ ածականական: Այս բառերի խոսքիմասային պատկանելությունը սովորաբար որոշվում է նրանց շարահյուսական կիրառությամբ: Այդ իսկ պատճառով, երբեմն նախադասության շարահյուսությունը փոխելիս ապահի բառերով արտահայտված պարագաները դառնում են որոշիչներ (կամ հակառակը), և հետևաբար մակբայական իմաստը վերածվում է ածականական իմաստի (կամ հակառակը): Այս երևույթը հատուկ է և՛ արևմտահայերենին, և՛ արևելահայերենին:

#### **Արևմտահայերեն՝**

**Անակնկալ (որ., ած.) հարվածը կզգետնե խեղճ մայրը (ՍՓ):**— Հարվածը **անակնկալ** (ձ. պ., մակ.) կզգետնե խեղճ մայրը:

Այն սահմանելու համար **հիշտ** (որ., ած.) բառը չկրճար գտնել Ավետիս (ՇՇ):— Այն **հիշտ** (ձ. պ., մակ.) սահմանելու համար բառը չկրճար գտնել Ավետիս:

**Թատ** (որ., ած.) աղմուկ կհաներ Հայտար-Փաշայի գերմանական մարտկոցը (ՇՇ):— Աղմուկ **շատ** (չ. պ., մակ.) կհաներ Հայտար-Փաշայի գերմանական մարտկոցը:

Չէր ըսեր, թե երբ որ արևը ծագի՝ հրշեջ գորհանցեն **առավոտյան** (որ., ած.) շեփոր մը կհնչե (ՇՇ):— Չէր ըսեր, թե երբ որ արևը ծագի՝ հրշեջ գորհանցեն շեփոր մը **առավոտյան** (ծ. պ., մակ.) կհնչե:

Աղավճիին երեկ (որ., ած.) գիշերվա տկարությունը ծանրացած էր (ՇՇ):— Աղավճիին գիշերվա տկարությունը երեկ (ծ. պ. մակ.) **ծանրացած** էր:

#### **Արևելահայերեն՝**

**Անակնկալ** (որ., ած.) **հարվածը** գետնում է խեղճ մորը:— Հարվածը **անակնկալ** (ձ. պ., մակ.) գետնում է խեղճ մորը:

Այն սահմանելու համար **հիշտ** (որ., ած.) բառը չէր կարողանում գտնել Ավետիսը:— Այն **հիշտ** (ձ. պ., մակ.) սահմանելու համար բառը չէր կարողանում գտնել Ավետիսը:

**Թատ** (որ., ած.) աղմուկ էր հանում Հայտար-Փաշայի գերմանական մարտկոցը:— Աղմուկ **շատ** (չ. պ., մակ.) էր հանում Հայտար-Փաշայի գերմանական մարտկոցը:

Չէր ասել, թե երբ որ արևը ծագում է, հրշեջ գորհանցից մի **առավոտյան** (որ., ած.) շեփոր է հնչում:— Չէր ասել, թե երբ որ արևը ծագում է, հրշեջ գորհանցից մի շեփոր է **հնչում** **առավոտյան** (ծ. պ., մակ.):

Աղավճիի երեկ (որ., ած.) գիշերվա տկարությունը ծանրացել էր:— Աղավճիի գիշերվա տկարությունը երեկ (ծ. պ., մակ.) **ծանրացել** էր:

Ինչպես տեսնում ենք, քերված նախադասությունների արևմտահայերեն և արևելահայերեն տարբերակներում շարահյուսության փոփոխությունը ստաց է քերում ոչ միայն շարահյուսական պաշտոնի, այլև միաժամանակ նաև խոսքիմասային պատկանելության փոփոխություն: Այստեղ շարահյուսությունը միանգամից երկու քերականական գործառույթ ունի:

**Որոշիչ-որոշիչ:** Որոշ նախադասություններում (եթե իմաստից ելնելով դա հնարավոր է) որոշիչի տեղափոխությունից կարող է փոփոխվել լրացում-լրացյալ, այսինքն որոշիչ-որոշյալ կապակցությունը. տեղափոխվելիս որոշիչը կարող է դառնալ մեկ այլ բառի որոշիչ: **Արևմտահայերեն՝**

Այս դասախոսությունը **ցնցող** (որոշիչ) **տպավորություն** (որոշյալ) գործեց (ՇՇ):— Այս **ցնցող** (որոշիչ) **դասախոսությունը** (որոշյալ) տպավորություն գործեց:

**Նետված** (որոշիչ) **սիգարեթի** (որոշյալ) կտորը կմնար խոտերուն մեջ (ՇՇ):— **Սիգարեթի նետված** (որոշիչ) կտորը (որոշյալ) կմնար խոտերուն մեջ:

Ջուրի այս **վճիտ** (որոշիչ) **հոսքը** (որոշյալ), ուրեմն, սա հորթուկին համար եղած է (ՍՓ):— **Վճիտ** (որոշիչ) **ջուրի** (որոշյալ) այս **հոսքը**, ուրեմն, սա հորթուկին համար եղած է:

#### **Արևելահայերեն՝**

Այս դասախոսությունը **ցնցող** (որոշիչ) **տպավորություն** (որոշյալ) գործեց:— Այս **ցնցող** (որոշիչ) **դասախոսությունը** (որոշյալ) տպավորություն գործեց:

**Նետված** (որոշիչ) **սիգարեթի** (որոշյալ) կտորը մնում էր խոտերի մեջ:— **Սիգարեթի նետված** (որոշիչ) կտորը (որոշյալ) մնում էր խոտերի մեջ:

Ջրի այս **վճիտ** (որոշիչ) **հոսքը** (որոշյալ), ուրեմն, այս հորթուկի համար է եղել:— **Վճիտ** (որոշիչ) **ջրի** (որոշյալ) այս **հոսքը**, ուրեմն, այս հորթուկի համար է եղել:

Երբեմն **որոշիչ-որոշյալ** շարահյուսությունը փոխելիս կարող են փոխադարձաբար փոխվել նրանց շարահյուսական պաշտոնները. «Այս կետը **խիստ** (որոշիչ) **շատ** (որոշյալ) կարևոր է» (ՇՇ):— «Այս կետը **շատ** (որոշիչ) **խիստ** (որոշյալ) կարևոր է»:

**Բացահայտիչ-բացահայտյալ:** Բացահայտիչի և բացահայտյալի շարադասությունը փոխելիս՝ փոխվում են նրանց շարահյուսական պաշտոնները. բացահայտիչը դառնում է բացահայտյալ, բացահայտյալը՝ բացահայտիչ: Երբեմն ճշվում է, որ բացահայտիչ-բացահայտյալ շարադասությունը փոխելիս այս կապակցությունը դառնում է որոշիչ-որոշյալ<sup>2</sup>. օրինակ, **Երևանը՝ Հայաստանի մայրաքաղաքը**— Հայաստանի մայրաքաղաք **Երևանը, Անուց Բազրատունյաց մայրաքաղաքից**— Բազրատունյաց մայրաքաղաք **Անուց:** Սակայն, ինչպես տեսնում ենք, բերված օրինակներում տեղափոխելիս չեն պահպանվում բացահայտիչի և բացահայտյալի քերականական կարգերը. **մայրաքաղաքը** բառը կորցրել է հոդը, իսկ **մայրաքաղաքից** բառի բացառական հոլովը դարձել է ուղղական: Եթե շարադասության փոփոխությունը կատարենք առանց քերականական կարգերի փոփոխության, ապա բացահայտիչը կդառնա բացահայտյալ, բացահայտյալը՝ բացահայտիչ. **Երևանը՝ Հայաստանի մայրաքաղաքը**— Հայաստանի **մայրաքաղաքը՝ Երևանը, Անուց՝ Բազրատունյաց մայրաքաղաքից**— Բազրատունյաց **մայրաքաղաքից՝ Անուց:**

Որոշ լեզվաբանների բացահայտիչը բացահայտյալի քերականական լրացումը չեն համարում՝ ընդունելով սակայն նրանց իմաստային կապը: Իհարկե, բացահայտիչն ու բացահայտյալը միևնույն առարկան են նշանակում, բայց նրանցից մեկը խոսողի կողմից հանարվում է գլխավոր, իսկ մյուսը, շարադասությանը ստորադասավելով, դառնում է երկրորդական. «Բացահայտական քառակապակցության եզրերը՝ և՛ բացահայտիչը, և՛ բացահայտյալը, նշանակում են միևնույն դեմոտատը, այլ կերպ ասած՝ բացահայտիչ-բացահայտյալ կապակցության մեջ մեք գործ ունենք միևնույն առարկայի լեզվական տարբեր նշանակումների հետ, որոնցից բացահայտիչը այլ առումով կամ բառերով բացահայտում է, որոշում բացահայտյալի իմաստը: Թե երկու նշանակումներից ո՞րն է դառնում լրացում, կախված է այն բանից, թե հաղորդման մեջ խոսողը ո՞րն է առաջին պլանը մղում որպես ելակետ (բացահայտյալ) և ո՞րը դիտում իբրև այդ ելակետի վերաբերյալ արտահայտվող նորություն»<sup>4</sup>:

Զանգի որ բացահայտիչի դրսևորումը սկզբունքորեն նույնն է արևելահայերենում և արևմտահայերենում, ուստի բացահայտիչ-բացահայտյալ շարադասության փոփոխությունը քերականական փոփոխություն է առաջացնում մեր լեզվի երկու գրական տարբերակներում էլ:

#### **Արևմտահայերեն՝**

**Օգնական խոհարարը, Բենեպ, թերթը ձգելով մոտեցավ պատուհանին (ՇՇ):— Բենեպ, օգնական խոհարարը, թերթը ձգելով մոտեցավ պատուհանին:**

**Իսկույն Խն Ավոն դրկեցի մի այրի կնոջ՝ Սառայի մոտ և բերել տվի անոր որդին՝ Կարոն (ԵՈ):— Իսկույն Խն Ավոն դրկեցի Սառայի՝ մի այրի կնոջ մոտ և բերել տվի Կարոն՝ անոր որդին:**

#### **Արևելահայերեն՝**

**Օգնական խոհարարը՝ Բենեպը, թերթը գցելով մոտեցավ պատուհանին:— Բենեպը՝ օգնական խոհարարը, թերթը գցելով մոտեցավ պատուհանին:**

**Իսկույն Խն Ավոյին ուղարկեցի մի այրի կնոջ՝ Սառայի մոտ և բերել տվի նրա որդուն՝ Կարոյին:— Իսկույն Խն Ավոյին ուղարկեցի Սառայի՝ մի այրի կնոջ մոտ և բերել տվի Կարոյին՝ նրա որդուն:**

Երբ բացահայտյալը անորոշ է, սովորաբար **բացահայտիչ-բացահայտյալ** շարադասությունը հնարավոր չէ փոխել. «Գյուղն ուներ մի ծերուկ քահանա՝ Տեր Սահակ» (ԵՈ). «Սեղանի մոտ նստած էր մի երիտասարդ՝ հաշվապահը». «Մենք մոտեցանք մի քաղաքի՝ Հրազդանին»:

**Ենթակա-ստորոգելի:** Երբ նախադասության ենթական և ստորոգելին ունեն միևնույն քերականական կարգերը, և նրանց իմաստները թույլ են տալիս փոխելու նրանց տեղերը, ապա այդ դեպքում ենթական դառնում է ստորոգելի, իսկ ստորոգելին՝ ենթակա: Այս երկույթը քնորոշ է ինչպես արևելահայերենին, այնպես էլ արևմտահայերենին. «Լիլից (ենթ.) մյտան (ստոր.) էր:— Մյուսը (ենթ.) Լիլից (ստոր.) էր»։ «Փևորոգն (ենթ.) ամենատուժեղն (ստոր.) է:— Ամենատուժեղը (ենթ.) Փևորոգն է»։ «Ամառը (ենթ.) իմ սիրած եղանակն (ստոր.) է:— Իմ սիրած եղանակն (ենթ.) ամառն (ստոր.) է»:

Բացի ճշվածներից, որոշ դեպքերում շարադասության փոփոխությունը կարող է առաջ

<sup>2</sup> Տե՛ս Մ. Աբելյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 398, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու (շարահյուսություն), Երևան, 1987, էջ 210:

<sup>3</sup> Տե՛ս Գ. Գողոթյան, Հայոց լեզու, Երևան, 1978, էջ 221:

<sup>4</sup> Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի և.եսության հիմունքները, Երևան, 1974, էջ

քերել նաև այլ փոփոխություններ. օրինակ՝ «Արխտղոմ աղային պես մեծ ու երևելի մարդ մը իրեն պատկերն անպատճառ (մակբայ) ունենալու է» (ՀՊ)։— «Անպատճառ (վերաքերական), Արխտղոմ աղային պես մեծ ու երևելի մարդ մը իրեն պատկերն ունենալու է»։ «Անձել խեցեցետին կոչվող խեչափառին մեկ ոտքով սպառնաց, լուրջուն հրամայեց և անմիջապես հետո (կապ) արձակեց իր վճիռը» (ՇՇ)։— «Անձել խեցեցետին կոչվող խեչափառին մեկ ոտքով սպառնաց, լուրջուն հրամայեց և հետո (մակբայ) անմիջապես արձակեց իր վճիռը»։

Այսպիսով, ինչպես տեսանք, արևելահայերենում և արևմտահայերենում շարադասության փոփոխություննից կարող է փոփոխվել.

1. նախադասության անդամների շարահյուսական պաշտոնը,
2. նախադասության միավորների խոսքիմասային պատկանելիությունը,
3. լրացում-լրացյալ կապակցությունը։

Ահա այս դեպքերում շարադասությունն ունի քերականական գործառույթ։ Ավելացնենք նաև, որ նշված շարադասական փոփոխությունները որոշ չափով փոխում են և նախադասության իմաստը, այսինքն՝ բացի քերականականից, շարադասությունն այստեղ նաև իմաստային գործառույթ ունի։

**Ծարադասության իմաստային գործառույթը։** Ծարադասության իմաստային գործառույթն ուսումնասիրելու համար նախ պարզենք, թե ինչով է պայմանավորված նախադասության իմաստը։ Նախադասության իմաստը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1. Նախադասության կազմի մեջ մտնող միավորների կոնկրետ բառային իմաստներով։
2. Արտաբերության հնչերանգով։
3. Այն միավորների դասավորությամբ, որոնց շարադասության փոփոխությունը առաջ է քերում քերականական և միաժամանակ իմաստային փոփոխություն։
4. Նախադասության տրամաբանական շեշտը կրող միավորով՝ այսինքն միջուկով (ոեմա)։

Մրանցից շարադասության իմաստային գործառույթի հետ կապվում են միայն վերջին երկուսը։ Դրանցից առաջինը արդեն քննվել է նախորդ բաժնում, այժմ տեսնենք, թե ինչպես է դրսևորվում երկրորդը։

Նախադասության տրամաբանական շեշտը կրող միավորը՝ միջուկը, գտնելու համար նախադասությունն ուսումնասիրում են ըստ առկայական տրոհման։ Այս տեսության համաձայն, նախադասության մեջ առկա են երկու տարրեր՝ ելակետը (այն, ինչ հայտնի է ավել իրարությունում) և միջուկը (այն, ինչ հարողում է խոսող ելակետի մասին)՝

Հայերենում միջուկը շեշտվում է հետևյալ միջոցներով.

- Ա. օժանդակ բայը շեշտվող միավորի մոտ դնելով,
- Բ. շեշտվող միավորը բայի դիմավոր ձևի մոտ դնելով,
- Գ. սաստկացնող բառեր գործածելով,
- Դ. ավելադրությամբ շքշուծով,
- Ե. հատուկ շեշտով, որը բանավոր խոսքում արտահայտվում է հնչերանգով։

Ուրեմն, այս միջոցներով կարելի է փոխել նախադասության տրամաբանական շեշտը, հետևաբար և իմաստը։ Ծարադասության փոփոխման միջոցով հնարավոր է փոխել սրանցից միայն առաջին երեքը, ուրեմն՝ շարադասության իմաստային գործառույթը կապվում է դրանց հետ։

**Արևելահայերենում** միջուկը շեշտելու ամենատարածված միջոցը օժանդակ բայը նրա մոտ դնելն է։ Օրինակ՝ «Գոմեջը նրան սնում էր իր փափիկ միջատներով» (ՎԱ)։ «Գոմեջն էր (ոչ ուրիշը) նրան սնում իր փափիկ միջատներով»։ «Գոմեջը նրան էր (ոչ ուրիշին) սնում իր փափիկ միջատներով»։ Ինչպես տեսնում ենք, միայն օժանդակ բայի շարադասության փոփոխությամբ փոխում ենք նախադասության տրամաբանական շեշտը կրող միավորը՝ միջուկը։ Արևելահայերենում օժանդակ բայի բոլոր հնարավոր տեղափոխությունները նախադասության մեջ, փոխում են նրա միջուկը, այսինքն՝ իմաստը։ Ուրեմն, օժանդակ բայի շարադասությունն արևելահայերենում իմաստային գործառույթ ունի։ Օժանդակ բայի դիրքը պայմանականորեն չեզոք կարելի է համարել այն ժամանակ, երբ օժանդակ բայը գտնվում է ստորոգյալի մյուս մասից (բայ, ստորոգելի) հետո։ Պայմանականորեն նման ասում, որովհետև այս դեպքում էլ շեշտվում է հենց ստորոգյալը։

Արևելահայերենում բայի պարզ ժամանակաձևով արտահայտված ստորոգյալների դեպքում միջուկը շեշտվում է նրանից առաջ դրվելով։ Այսինքն՝ այս դեպքում ստորոգյալի տեղաշարժով հնարավոր է փոխել նախադասության տրամաբանական շեշտը կրող միավորը՝

<sup>5</sup> Այս հարցի մասին մանրամասն տե՛ս Վ. Քոչյան, Ակտուալ անդամատունը և շարադասությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1990։

միջուկը. «Աղջիկը ձեռքի թխվածքը նետեց (ոչ ուրիշ բան) արքի գիրկը» (ՎԱ). «Աղջիկը նետեց (ոչ ուրիշը) ձեռքի թխվածքը արքի գիրկը. «Աղջիկը ձեռքի թխվածքը արքի գիրկը նետեց (ոչ ուրիշ տեղ)»:

Եթե միջուկը հենց ստորոգյալն է, ապա այն կարող է դրվել նախադասության սկզբում կամ պարզապես առանձնացվել հատուկ շեշտով. «Ձարմացալ մարդն անկեզու կենդանու այդ արարքից» (ՎԱ) կամ «Մարդը գարմացա՛լ անկեզու կենդանու այդ արարքից»: Ընդհանրապես, եթե միջուկը հատուկ շեշտ է կրում, շարադասության դերը այդ դեպքում նվազում է, և միջուկը կարող է տարբեր դիրքերում գտնվել. «Մարդը անկեզու կենդանու այդ արարքից գարմացա՛վ»: Այս դեպքում հնչերանգի դերը չափազանց կարևորվում է:

Բայի հարկադրական եղանակով արտահայտված ստորոգյալ ունեցող նախադասություններում միջուկը շեշտվում է պետք է (պիտի) եղանակիչի կամ ամբողջ ստորոգյալի միջոցով. «Այդ մարդկանցով պետք է խեչանն ուտեր չարչի Փիլոյի խոզը» (ՎԱ) կամ «Այդ մարդկանցով պետք է ուտեր խեչանը չարչի Փիլոյի խոզը». «Այդ մարդկանցով խեչանը պետք է չարչի Փիլոյի խոզը ուտեր» կամ «Այդ մարդկանցով խեչանը պետք է ուտեր չարչի Փիլոյի խոզը». «Այդ մարդկանցով խեչանը չարչի Փիլոյի խոզը պետք է ուտեր»:

Ինչպես նշվել է, միջուկը շեշտվում է նաև սաստկացուցիչ բառերով: Որոշ դեպքերում այդ բառերի շարադասության փոփոխությունը առաջ է բերում միջուկի փոփոխություն. «Անպատճառ նա կզնա թուն». «Նա անպատճառ տուն կզնա». «Նա անպատճառ կզնա տուն»: «Նա կզնա անպատճառ տուն»: Սակայն այս երևույթը, պայմանավորված լինելով բառերի կոնկրետ իմաստներով, քիչ դեպքերում է հնարավոր:

Այսպիսով, արևելահայերենում նախադասության տրամաբանական իմաստը (միջուկը) շարադասության միջոցով հնարավոր է փոխել այն դեպքում, երբ կարող ենք փոխել օժանդակ բայի, ստորոգյալի, երբեմն էլ սաստկացնող բառերի շարադասությունը: Ծարադասությունն իմաստային գործառույթ ունի այն դեպքում, երբ նրա փոփոխությունը առաջ է բերում իմաստային (երբեմն նաև միաժամանակ քերականական) փոփոխություններ:

Ծարադասության իմաստային գործառույթի սահմանները կտրուկ նեղանում են արևմտահայերենում: Այստեղ միջուկը շեշտվում է գլխավորապես մյուս միջոցներով: Դա առաջին հերթին պայմանավորված է արևմտահայերենում օժանդակ բայի կայուն դիրք ունենալով: Այստեղ օժանդակ բայը գրեթե միշտ պահում է իր վերջնային (ստորոգյալի մյուս մասի հետ համեմատած) դիրքը, օրինակ՝ «Մի՛նակ երկու ջորեբեռ հի՛նա բերեր էր (արևվել. էր բերել)» (ՀՄ). «Չալլիկն ու Գասպարը սու՛նկ բերեր էին (արևել. էին բերել)» (ՀՄ). «Մե՛ծ հարսը աղցան ու թանձր ապուր եփեր էր (արևել. էր եփել)» (ՀՄ):

Արևմտահայերենում օժանդակ բայն իր դիրքը չի փոխում նույնիսկ հարցական նախադասություններում, ինչը պարտադիր է արևելահայերենի համար. «Ասո՛նք ի՛նչո՛ւ գրուցին կախեր են (արևել. ի՛նչո՛ւ են)» (ՀՄ). «Ես ասոր մեջ ի՛նչո՛վ հանցավոր եմ (արևել. ի՛նչո՛վ եմ)» (ՀՄ). «Չհասկցալ մանավանդ, թե՛ ճամբարները ի՛նչո՛ւ գոց են (արևել. ի՛նչո՛ւ են) և ո՛վ գոցեր է (արևել. ո՛վ է)» (Մ): Օժանդակ բայն արևմտահայերենում տեղափոխվում է հազվադեպ, հիմնականում չափածո խոսքում. «Իմ արյունն է գոլացած քու քրտինքեղ» (ԴՎ). «Արդեն հյուղին ա՛ց ո՛ր խորշն էր շերմ գտած» (ԴՎ): Օժանդակ բայի դիրքի այս կայունությունն է պատճառը, որ միջուկն արևմտահայերենում գլխավորապես առանձնացվում է հատուկ շեշտով, որը բանավոր խոսքում արտահայտվում է հնչերանգով: Սա այնքան օրինաչափ երևույթ է արևմտահայերենի համար, որ գրավոր խոսքում շեշտը սովորաբար չի դրվում: Ընդհանրապես հնչերանգն արևմտահայերենում ավելի մեծ դեր ունի, քան արևելահայերենում, և ճիշտ է նկատված, որ «ստղակյան բնութագրմամբ, արևմտահայերենը ավելի մեղեդիական է թվում, քան արևելահայերենը, ուր հնչերանգը համեմատաբար նվազ բեռնվածություն ունի»<sup>6</sup>: Փաստորեն, եթե արևմտահայերենում տրամաբանական շեշտի փոփոխության հետ օժանդակ բայը կարող է տեղաշարժվել (Իմ արյունն է գոլացած) և կարող է չտեղաշարժվել, բայց միջուկը հնարավոր է շեշտել այլ միջոցով (Իմ արյունն է գոլացած է), ապա արևելահայերենում, եթե նախադասության մեջ կա օժանդակ բայ, այն անպայման պետք է տեղափոխվի: Նույնիսկ սաստկացնող բառերը օժանդակ բայի առկայության դեպքում չեն կարող շեշտել միջուկը. հիմա. «Անպատճառ նա է գնալու տուն» և «Անպատճառ նա տուն է գնալու»: Ինչպես տեսնում ենք, անպատճառ սաստկացնող բառն այստեղ չի ազդում տրամաբանական շեշտի վրա:

Բացի առանձին շեշտից, միջուկը կարող է առանձնացվել մեկ այլ միջոցով՝ ավելադրությամբ շրջումով: Սա այն եղանակն է, որի դեպքում միջուկը ստանում է ավելադիր հանգույց, և նախադասությունը ստանում է բարդ նախադասության տեսք: Տրամաբանա-

<sup>6</sup> Ա. Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Երևան, 1985, էջ 259:

<sup>7</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 588:

կան շեշտը կրող միափորի առանձնացումն արևմտահայերենում հաճախ այս եղանակով է կատարվում. «Մարդուկն առաջին անգամն է, որ կտեսնեի» (ՌԶ), «Պշականն է, որ կը քաշն մեզ իբրև թե բռնաբար» (Մ). «Ձիով կառքերն են, որ կշոքին սմբակներու կշույթավոր դոփյունով» (ԱԾ). «Հոտ էր, որ Մկրտիչ քեռին խոսք մը ըսավ» (ԱԾ):

Ինչպես արևելահայերենում, արևմտահայերենում նույնպես միջուկը կարող է շեշտվել նաև սաստկացնող բառերով: Այստեղ էլ երբեմն այդ բառերի տեղափոխությունը կարող է փոխել միջուկը. «Խաչիկը միայն (ոչ ուրիշը) ըսելիք մը գտավ» (ԱԾ). «Խաչիկը ըսելիք մը միայն (ուրիշ ոչինչ) գտավ». «Խաչիկը ըսելիք մը գտավ միայն (ուրիշ ոչինչ չարեց)»:

Այսպիսով, արևմտահայերենում միջուկը գլխավորապես շեշտվում է ավելարդությանմբ շոյումով, հատուկ շեշտով, սաստկացնող բառերով, երբեմն էլ օժանդակ բայի տեղափոխությամբ:

Ասվածներից կարելի է եզրակացնել, որ երկու գրականներում էլ շարադասությունը իմաստային գործառույթ ունի միայն այն դեպքում, երբ նրա փոփոխությունից փոխվում է նախադասության տրամաբանական շեշտը կրող միջուկը կամ էլ առաջ են գալիս նախորդ բաժնում ուսումնասիրված քերականական փոփոխությունները, որոնք միաժամանակ նաև իմաստային են:

**Շարադասության ոճական գործառույթը:** Ընդհանուր ձևով կարելի է ասել, որ շարադասության բոլոր այն փոփոխությունները, որոնք չեն առաջացնում մինչև այժմ նշված քերականական և իմաստային փոփոխությունները, միայն ոճական արժեք ունեն: Ըստ էության, հայերենում (երկու տարբերակներում էլ) բացահայտիչ-բացահայտչալ կապակցության և օժանդակ բայի շարադասություններն են, որ միշտ քերականական կամ իմաստային գործառույթ ունեն: Նախադասության մյուս միակույրների շարադասությունը մի դեպքում կարող է քերականական կամ իմաստային գործառույթ ունենալ, մյուս դեպքում՝ ոչ: Ահա այն դեպքերում, երբ նախադասության միավորների տեղափոխությունը չի առաջացնում իմաստային և քերականական փոփոխություններ, այլ միայն եղանակավորում է խոսքը՝ տալով նրան հուզարտահայտչական գունագան երանգներ, շարադասության գործառույթը ոճական է: Եվ պատահական չէ, որ շարադասության այս գործառույթը ավելի շատ հանդես է գալիս չափածո խոսքում: Դեռևս Արսեն Այտընյանը նշում է, որ «Տաղաչափութեան մեջ կրճան շատ անգամ սովորականէն դուրս շրջմունքներ ալ ըլլալ. որոնք այն աստե՛ն միայն վայելուչ են՝ երբ իմաստի այլալուծիւն չեն ի տար: Զորօրինակ վերջադաս յատկացուցիչ եւ անական, կամ յատկացուցիչն ու անականը յատկացեալէն եւ զոյականէն բաժնուած, եւայլն»<sup>6</sup>: Ասվածները ապացուցելու համար բերենք օրինակներ գեղարվեստական գրականությունից:

### Արևելահայերեն՝

Նրա ուներն է օթևան ընտրում  
վերջին երամը հոգնած կարապի: (ՀՄ)

Կրկին ձևեր փոխում նա գանազան,  
Բարձրանում էր հետո կուլերն ի վեր  
Եվ շիկացած ուսն էր շփում եզան... (ՀՄ)

### Արևմտահայերեն՝

Տիեզերքի կանգնեցաք ճամփաներու վրա  
բանուկ (վԹ)  
Կնայի երբ որ քու մեջդ հին ատեն (ՎԹ)  
Աղջիկ մըն է կարծես հովը՝ գինով մուրտի  
բուրումեն: (ՄՄ)

փոխ.՝ հոգնած կարապի վերջին երամը:  
փոխ.՝ նա կրկին գանազան ձևեր (էր)  
փոխում,  
փոխ.՝ Եվ եզան շիկացած ուսն էր շփում...

փոխ.՝ Տիեզերքի բանուկ ճամփաներու վրա  
կանգնեցաք  
փոխ.՝ Երբ որ հին ատեն քու մեջդ կնայի  
փոխ.՝ Հովը կարծես մուրտի բուրումեն  
գինով աղջիկ մըն է:

Ակնհայտ է, որ առանց շարադասության ոճական գործառույթի կիրառման բանաստեղծությունը կորցնում է իր ողջ հմայքը, դառնում սառը և պրոզայիկ: Ինչպես նկատել է Ա. Այտընյանը «Օրջման ձևը տաղաչափութեան յատուկ է. այնպես որ առանց շրջման

<sup>6</sup> Ա. Այտընյան, Բնական քերականությունը աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 417—418:

չինուած ոտանաւոր մը՝ կրնայ ըստիլ թէ ոտանաւորի էական նկարագիրը չունի»<sup>9</sup>: Պատահական չէ, որ չափածոյի գանազան ոճական հնարներ կապված են հենց շարադասութեան փոփոխման հետ: Օրինակ շրջումը, որը «ներհակութեամբ կազմված մի ձև է, որն ստաջանում է նախադասութեան մի մասում որոշակի շարադասութիւն ունեցող բառերի՝ նախադասութեան հաջորդ մասում հակառակ շարադասութեամբ հանդես գալու հետևանքով: Օրինակներ.

**Կյանքը երագ է, երագն էլ մի կյանք,**  
 Երկուսն էլ անցվոր, երկուսն էլ պատրանք: (Հ. Թումանյան)  
 Ու վերքերը դառնում են երգ,  
 Ու երգերը դառնում են վերք: (Պ. Սևակ)»<sup>10</sup>:

Ծարադասութեամբ է պայմանավորված նաև ոճական մի այլ հնար՝ խաչակերպը, «որն առաջանում է շարահյուսորեն կապակցված՝ լրացում-լրացյալ բառերի փոխաւտեղմամբ.

**Ինձնից խոսելուց քեզնից չամաչեմ,**  
**Ինձնից չամաչեմ քեզնից խոսելուց:** (Հ. Սահյան)»<sup>11</sup>:

Այս ոճական հնարները առաջ են գալիս շարադասութեան քերականական գործառույթի կիրառումով: Փաստորեն այստեղ շարադասութիւնը միաժամանակ ունի և՛ ոճական, և՛ քերականական գործառույթներ, քանի որ նախադասութեան մեջ շարադասութեան միջոցով կատարվում են քերականական փոփոխություններ, որոնք էլ հենց երանգավորում են խոսքը:

Ի մի բերելով մինչև այժմ բոլոր ասվածները, կարելի է եզրակացնել, որ շարադասութիւնը հայերենում (երկու տարբերակներում էլ) երեք գործառույթ ունի՝ քերականական, իմաստային և ոճական:

Ծարադասութիւնը քերականական գործառույթ ունի այն ժամանակ, երբ նրա փոփոխությունը առաջ է բերում քերականական փոփոխություններ: Քերականական գործառույթը միաժամանակ նաև իմաստային է, քանի որ տեղի է ունենում նաև իմաստի փոփոխություն: Ծարադասութեամբ կատարվող քերականական փոփոխությունները որոշ դեպքերում կարող են ոճավորել խոսքը, և այդ դեպքում շարադասութիւնը քերականականի հետ միասին կունենան նաև ոճական գործառույթ:

Ծարադասութիւնն իմաստային գործառույթ ունի այն դեպքում, երբ նրա փոփոխությունից փոխվում է նախադասութեան տրամաբանական շեշտը կրող մասը՝ միջուկը:

Ծարադասութիւնը ոճական գործառույթ ունի, երբ նրա փոփոխությունից չեն առաջանում իմաստային և քերականական փոփոխություններ, այլ միայն երանգավորվում է խոսքը: Սակայն երբեմն ոճավորումը կարող է կատարվել քերականական փոփոխութեամբ միջոցով: Այս դեպքում շարադասութեան քերականական և ոճական գործառույթները համդես են գալիս միասնաբար:

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- |                         |                       |
|-------------------------|-----------------------|
| ԱԾ — Անդրահիկ Ծառուկյան | Մ — Մամուկ            |
| ԴՎ — Դանիել Վարուժան    | ՄՄ — Միսաք Մեծաբեկ    |
| ԵՕ — Եղվանդ Օտյան       | ԾԾ — Ծահան Ծահնուր    |
| ՀՄ — Հակոբ Մանուրի      | ՍՓ — Սմբատ Փանոսյան   |
| ՀՊ — Հակոբ Պարոնյան     | ՎԱ — Վախթանգ Անանյան  |
| ՀՍ — Համո Սահյան        | ՎԹ — Վահան Թեքեյան    |
|                         | ՐՔ — Րաֆֆի Քեչաւազյան |

**А. Л. САРКИСЯН — Функции синтаксиса в современном восточно- и западно-армянском.** — В статье различаются три функции синтаксиса — грамматическая, семантическая и стилистическая, исследуются проявления каждой из них в западно- и восточноармянском. Представляются изменения этих функций при перестановке членов предложения.

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 417:

<sup>10</sup> Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտութեան հիմունքներ, Բ. 2, Երևան, 1991, էջ 172:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 173: